

ԳՆԱԾԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ.

ԻՆՉՊԵՍ ԵՆ ՓՈՓՈԽՎՈՒՄ ԳՆԵՐՆ ԸՍՏ ՍՊԱՌՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

DOI: 10.52174/2579-2989_2022.3-21

Հիմնաբառեր. գնաճ, սպառողական գների ինդեքս, սպառման նպատակներ, անկայունություն, մակրոտնտեսական կարգավորում

Գնաճը յուրաքանչյուր պետության մակրոտնտեսական վիճակը բնութագրող էական ցուցիչ է: Այն նաև բնակչության կենսամակարդակի կարևորագույն բնութագրիչ է, որի մշտական ուսումնասիրությունը, խնդիրների առանձնացումը և լուծման ուղիների որոնումը պարզապես անհրաժեշտություն են: Այս համարեքստում էական է հասկանալ, թե ինչպիսին է գնաճն ըստ սպառման որոշակի ուղղությունների, քանի որ այդ կերպ հնարավոր կլինի գնահատել թե՛ գնաճը պայմանավորող էական գործոնները, թե՛ կենսամակարդակի վրա ազդող բացասական բնութագրիչները:

Յուրաքանչյուր պետության մակրոտնտեսական իրավիճակը բնութագրող և պայմանավորող էական գործոն է գների կայունության ապահովումը: Գները մակրոտնտեսական կայունության կամ տնտեսական գործունեության համար բարենպաստ պայմանների ստեղծման հիմնական նախադրյալներից են: Գների կայունությամբ երկարաժամկետ հատվածում ապահովվում է տնտեսական աճ, հետևաբար՝ բնակչության կենսամակարդակի բարձրացում: Գների կայունություն բառացիորեն չի նշանակում անփոփոխ գներ, այլ դրանց դանդաղ և կայուն աճ: Ուստի պետք է նպատակադրվի ոչ թե զրոյական, այլ չափավոր գնաճ¹:


Գների կայունությունը բնութագրող ցուցանիշը գնաճն է, որը որոշակի ժամանակահատվածում գների տոկոսային փոփոխությունն է²: ՀՀ-ում գնաճը չափվում է սպա-



Գագիկ ԲԱԴԱԴՅԱՆ

ՀՊՏՀ ասպիրանտ

Գերազանցությամբ ավարտել է ՀՊՏՀ բակալավրիատը («Հակա-ճգնաժամային կառավարում»), սպա մագիստրատուրան («Գործարար վարչարարություն»): Այժմ ՀՊՏՀ կառավարման ամբիոնի ասպիրանտ է: Ուսմանը զուգահեռ, «Ամբերդ» հեղափոխական կենտրոնի հեղափոխական խմբի անդամ է: Ներկայում որպես փորձագետ աշխատում է ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության ֆինանսատնտեսագիտական վարչությունում: Հեղինակ և համահեղինակ է շուրջ 20 գիտական հոդվածների:

 <https://orcid.org/0000-0001-6026-6204>

¹ ՀՀ ԿԲ պաշտոնական կայք՝ <https://www.cba.am/am/SitePages/mpobjective.aspx>, մուտքը՝ 24/05/2022, 17:09:

² Ղուշյան Հ.Բ., Մակրոտնտեսական կարգավորում, Եր., 2005, էջ 450:

նողական գների ինդեքսի միջոցով, որը սպառողական զամբյուղի մեջ ընդգրկված ապրանքների և ծառայությունների՝ իրենց համապատասխան կշիռներով կշռված գների միջին մեծությունն է: Հայաստանում սպառողական զամբյուղում ներկայում ներառվում են 450 անուն ապրանք և ծառայություն, որոնց գները պարբերաբար գրանցվում են շուկայում և, իրենց կշիռն համապատասխան, ներառվում սպառողական գների ինդեքսում³:

ՀՀ-ում, որպես սպառողական գների ինդեքսի համար կիրառվող դասակարգիչ, հաստատվել է «Անհատական սպառում ըստ նպատակների դասակարգիչ» (ԱՍԸՆԴ) ազգային տարբերակը⁴: Նշյալ դասակարգչով իրականացվում է սպառողական գների ինդեքսի հաշվարկ 12 ուղղությունների համար, որոնք սահմանում են սպառման նպատակները:


Առանձնակի կարևորություն է ստանում նաև այդ ուղղություններով գնաճի ուսումնասիրությունը՝ հասկանալու համար, թե որ նպատակային խմբում ընդգրկված սպառման պարագայում ինչպիսի գնաճ է արձանագրվել: Հոդվածում հաջորդիվ կներկայացվի այդ ուղղություններից յուրաքանչյուրում (բացառությամբ տարբեր ապրանքների և ծառայությունների ուղ-

ղության, քանի որ վերջինս ցույց չի տալիս սպառման որևէ հստակ նպատակայնություն) 2020 թվականի հունվարից մինչև 2022 թվականի ապրիլ ընկած ժամանակահատվածում արձանագրված գնաճն ամսական կտրվածքով՝ նախորդ ամսվա համեմատ:

Սննդամթերք և ոչ ակոհոլային խմիչքներ: Սպառման այս ուղղությամբ 2022 թվականի ապրիլին, մարտի համեմատ, գրանցվել է 3.97% գնաճ, որը դիտարկվող 28 ամիսների ընթացքում արձանագրված 3-րդ ամենաբարձր ցուցանիշն է: Առավել բարձր գնաճ այս ուղղությամբ գրանցվել է միայն 2020 թվականի դեկտեմբերին և 2021 թվականի հունվարին, համապատասխանաբար՝ 7.2% և 4.5%: Դիտարկման ենթակա 28 ամիսներից 11-ի պարագայում արձանագրվել է գնանկում (միջինում՝ -1.6%), իսկ 17 ամիսների պարագայում՝ գնաճ (միջինում՝ +2.6%): Այս ուղղությամբ գնաճի ամսական ցուցանիշները 2020 թվականի հունվարից մինչև 2022 թվականի ապրիլ ընկած ժամանակահատվածի համար ներկայացված են գծապատկեր 1-ում:

Սննդամթերքի և ոչ ակոհոլային խմիչքների պարագայում գնաճը դիտարկվող 28 ամիսների ընթացքում դրսևորել է փո-

Սպառողական գների ինդեքս (նախորդ ամսվա նկատմամբ)




ԳԾԱՊԱՏԿԵՐ 1

Սննդամթերքի և ոչ ակոհոլային խմիչքների սպառման ուղղությամբ գնաճը 2020-2022 թթ.⁵

³ ՀՀ ԿԲ պաշտոնական կայք՝ <https://www.cba.am/am/SitePages/mpobjective.aspx>, մուտքը՝ 24/05/2022, 17:09:
⁴ ՀՀ ՎԿ, Մեթոդաբանական ցուցումներ սպառողական ապրանքների գների և ծառայությունների սակագների դիտարկման և սպառողական գների ինդեքսի հաշվարկման, հաստատված է Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2020 թվականի փետրվարի 27-ի թիվ 12-Ա որոշմամբ, գլուխ 7:
⁵ ՀՀ ՎԿ հրապարակումներ, Սպառողական գների ինդեքսը Հայաստանի Հանրապետությունում 2022 թվականի հունվար-ապրիլին: ՀՀ ՎԿ հրապարակումներ, Սպառողական գների ինդեքսը Հայաստանի Հանրապետությունում 2021 թվականի հունվար-դեկտեմբերին: ՀՀ ՎԿ հրապարակումներ, Սպառողական գների ինդեքսը Հայաստանի Հանրապետությունում 2020 թվականի հունվար-դեկտեմբերին:

Սպառողական գների ինդեքս (նախորդ ամսվա նկատմամբ)



ԳԾԱՊՍՏԿԵՐ 2

Հագուստի և կոշիկի սպառման ուղղությամբ գնաճը 2020-2022 թթ.⁶

փոխման պարբերաշրջանային միտումներ, ինչը, կայմանավորված գյուղատնտեսության սեզոնային զարգացմամբ, բավականաչափ ընդունելի իրավիճակ է, այլ հարց է, թե որքանով է այդ պարբերաշրջանային փոփոխությունը տեղի ունենում կայունության համատեքստում: Այդ նպատակով հաշվարկել ենք 2 ցուցանիշ՝ միջին գնաճ և գնաճի փոփոխման միջին քառակուսային շեղում: Առաջին ցուցանիշը կազմում է 0.99%, իսկ երկրորդը՝ 2.63%: Նման աստիճանի շեղումը վկայում է գնաճի ոչ այնքան բարձր կայունության մասին: Արձանագրենք նաև, որ ցուցանիշի փոփոխման միտումը դրական թեքվածությամբ կոր է: Իսկ միտումից փաստացի ցուցանիշների շեղումը բավականաչափ բարձր է (R^2 ցուցանիշը գրեթե զրոյական է), որը ևս վկայում է, որ այս ուղղության պարագայում գների փոփոխությունը կայուն չէ:

Հագուստի և կոշիկ: Սպառման համար հաշվարկված ՍԳԻ-ն 2022 թվականի ապրիլին, մարտի համեմատ, կազմել է 2.29%, որը այս ուղղության համար 2022 թվականին արձանագրված ամենաբարձր ցուցանիշն է: 2022 թվականին կամ արձանագրվել է գնանկում, կամ գրեթե զրոյական գնաճ: Դիտարկվող 28 ամիսների ընթացքում 11 անգամ արձանագրվել է գնանկում և 17 անգամ գնաճ: Գնանկման միջին ցուցանիշը կազմել է -1.36%, իսկ գնաճինը՝ +1.69%: Էական է նաև հասկանալ, թե ինչպիսին են գնաճի ցուցանիշի փոփոխման


միտումները: Այդ նպատակով գծապատկեր 2-ում ներկայացված է սպառման այս ուղղության համար հաշվարկված ամսական ՍԳԻ-ն:

Ինչպես և նախորդ դեպքում, այս պարագայում ևս ցուցանիշի փոփոխությունն ունի պարբերաշրջանային զարգացում, ավելին, նախորդ մեկ տարում՝ 2021 թվականի ապրիլից մինչև 2022 թվականի ապրիլը, պարբերաշրջաններն ավելի հստակ են: Սակայն, հետաքրքրականն այն է, որ ձևավորված դրական թեքվածությամբ միտումից փաստացի ցուցանիշներն ավելի շեղված են, քան նախորդ ուղղության պարագայում, ինչի մասին վկայում է R^2 ցուցանիշի ավելի ցածր մակարդակը: Արձանագրենք նաև, որ հագուստի և կոշիկի սպառման համար հաշվարկված ՍԳԻ միջին քառակուսային շեղման և միջինի հարաբերակցությունը 375% է, ինչը հավաստում է գների փոփոխման անկայունության, ավելին, այդ ցուցանիշի ավելի բարձր լինելու մասին, քան սննդամթերքի և ոչ ակոհոլային խմիչքների պարագայում էր:

Ակոհոլային խմիչքներ, ծխախոտային արտադրարտեսակներ: Այս ուղղության պարանքների առումով, սպառողական գների ինդեքսն ունի փոփոխության բավականաչափ կայուն միտումներ: Հետաքրքրական է, որ դիտարկվող ժամանակահատվածում ոչ մի ամիս չի արձանագրվել գնանկում, իսկ գնաճը միջինում կազմել է 0.82% (գծապատկեր 3):

⁶ Տես նույն տեղում:

Սպառողական գների ինդեքս (նախորդ ամսվա նկատմամբ)



ԳԾԱՊԱՏԿԵՐ 3



Ալկոհոլային խմիչքների, ծխախոտային արտադրատեսակների սպառման ուղղությամբ գնաճը 2020-2022 թթ.⁷


Այս ուղղությամբ ձևավորված է հստակ պատկեր. մասնավորապես՝ առկա է որոշակի պարբերաշրջանային զարգացում՝ ըստ որոշակի ամիսների վերելքների և սահուն անկումների, ուստի այժմ կարելի է կանխատեսել գնաճի ցուցանիշի անկում՝ պայմանավորված պարբերաշրջանի ներկա փուլով: Ընդհանուր առմամբ, միտումը բացասական թեքվածությամբ կոր է, իսկ միջին քառակուսային շեղում/միջին հարբերակցությունը՝ 110%: Կարող ենք եզրակացնել, որ սպառման այս ուղղությամբ գնաճը փոփոխվում է կայուն կերպով՝ ունենալով անկման միտում:

Բնակարանային ծառայություններ, ջուր, էլեկտրաէներգիա, գազ և վառելիքի այլ տեսակներ: Սպառման այս ուղղությամբ

2020 և 2021 թվականներին գրանցվել է գնաճի բավականաչափ կայուն փոփոխություն, մասնավորապես՝ դա տատանվել է [-1%;+1%] միջակայքում: Սակայն, իրավիճակը բավականաչափ փոփոխվել է 2022 թվականի առաջին քառամսյակում, մասնավորապես, օրինակ՝ մարտին արձանագրվել է 3.09% գնաճ: Այնուամենայնիվ, իրավիճակն այս ուղղությամբ, ընդհանուր առմամբ, կարող ենք որակել որպես կայուն, քանի որ միջին գնաճը 0.24% է, իսկ միջին քառակուսային շեղումը՝ 0.68%: Ցուցանիշների շարքը ներկայացված է գծապատկեր 4-ում:

Գծապատկերային դիտարկմամբ նույնպես պարզ է դառնում, որ շարքը, նախորդ դեպքերի համեմատ, ավելի կայուն է, սա-

Սպառողական գների ինդեքս (նախորդ ամսվա նկատմամբ)




ԳԾԱՊԱՏԿԵՐ 4



Բնակարանային ծառայությունների, ջրի, էլեկտրաէներգիայի, գազի և վառելիքի այլ տեսակների սպառման ուղղությամբ գնաճը 2020-2022 թթ.⁸

⁷ Տես նույն տեղում:
⁸ Տես նույն տեղում:

Սպառողական գների ինդեքս (նախորդ ամսվա նկատմամբ)



ԳԾԱՊԱՏԿԵՐ 5

Տնային գործածության առարկաների, կենցաղային տեխնիկայի և բնակարանի ընթացիկ սպասարկման ուղղությամբ գնաճը 2020-2022 թթ.⁹

կայն ամիս առ ամիս այդ կայունությունը նվազում է՝ ի հաշիվ միտման նկատմամբ շեղվածության մեծացման հանգամանքի:


Տնային գործածության առարկաներ, կենցաղային տեխնիկա և բնակարանի ընթացիկ սպասարկում: Գնաճի տեսանկյունից, քիչ թե շատ կայուն է տնային գործածության առարկաների, կենցաղային տեխնիկայի և բնակարանի ընթացիկ սպասարկման սպառման ուղղությունը, ինչը պայմանավորված է վերջինիս առանձնահատկություններով: Այստեղ գնաճը տատանվել է [-0.2%;+2.0%] միջակայքում: Միջին գնաճն այս շարքում ընդամենը 0.53% է, իսկ միջին քառակուսային շեղումը՝ 0.65%, որի արդյունքում այս ցուցանիշի տեսանկյունից քննարկվող 12 ուղղություններից երկրորդ ամենակայուն ուղղու-

թյունն է:

Սակայն, գծապատկեր 5-ի դիտարկմամբ պարզ է դառնում, որ վերոնշյալ կայունությունն ընդամենը միջինացված ցուցանիշ է, քանի որ շարքը չունի փոփոխման հստակ ձևավորված միտումներ, և յուրաքանչյուր ամիս գնաճը կարող է փոփոխվել անկանխատեսելի ուղղությամբ, այսինքն՝ չկա ձևավորված որոշակի պարբերաշրջանայնություն: Այս պարագայում տնային գործածության առարկաներ, կենցաղային տեխնիկա և բնակարանի ընթացիկ սպասարկում սպառման ուղղությամբ գնաճի փոփոխության կայունությունը կարող ենք գնահատել որպես միջին մեծության:

Առողջապահություն: Առողջապահության համար հաշվարկված սպառողական

Սպառողական գների ինդեքս (նախորդ ամսվա նկատմամբ)




ԳԾԱՊԱՏԿԵՐ 6

Առողջապահության սպառման ուղղությամբ գնաճը 2020-2022 թթ.¹⁰

⁹ Տե՛ս նույն տեղում:
¹⁰ Տե՛ս նույն տեղում:

Սպառողական գների ինդեքս (նախորդ ամսվա նկատմամբ)



ԳԾԱՊԱՏԿԵՐ 7


Տրանսպորտի սպառման ուղղությամբ գնաճը 2020-2022 թթ.¹¹

գների ինդեքսը դրսևորել է բավականաչափ նույնական փոփոխություններ, ինչպես նախորդ ուղղության պարագայում: Այս ուղղությամբ միջին գնաճը ընդամենը 0.3% է, իսկ միջին քառակուսային շեղումը՝ 0.5%, ցուցանիշների տատանման միջակայքը և բավականաչափ նեղ է՝ տատանվելով [-0.3%;+1.7%] միջակայքում: Այս դեպքում ցածր գնաճը և կայունությունը պայմանավորված են ոլորտային առանձնահատկություններով: Սակայն, հաշվի առնելով գծապատկեր 6-ի արդյունքը, կարող ենք արձանագրել, որ այս պարագայում ևս ցուցանիշները չունեն փոփոխման հստակ ուղղություններ, հետևաբար՝ այս ուղղությամբ ևս գնաճի կայունությունը առավելագույնը միջին մեծության է:

Տրանսպորտ: Տրանսպորտի սպառման ուղղությամբ գնաճը 2022 թվականի ապ-

րիլին կազմել է 3.12%, որը դիտարկված ողջ ժամանակահատվածում ամենաբարձր ցուցանիշն է: Դիտարկված 28 ամիսներից միայն 6-ի դեպքում է գրանցվել գնանկում, որի միջին ցուցանիշը -0.64% է, մնացյալ 22 ամիսներին արձանագրվել է գնաճ՝ միջինում 0.83%: Ընդհանուր շարքի միջինը 0.52% է, իսկ միջին քառակուսային շեղումը՝ 0.97%: Այս հարաբերակցությունը վկայում է որոշակի կայունության մասին: Գծապատկեր 7-ի դիտարկմամբ պարզ է դառնում, որ ցուցանիշն աչքի է ընկնում որոշակի պարբերաշրջանային շարժընթացով, իսկ միտումից շեղվածությունը, նախորդ դեպքերի համեմատ, ավելի փոքր է: Հաշվի առնելով այս դիտարկումները՝ կարող ենք եզրակացնել, որ այս ուղղությամբ գնաճի տեմպերը ևս փոփոխվում են հա-


Սպառողական գների ինդեքս (նախորդ ամսվա նկատմամբ)



ԳԾԱՊԱՏԿԵՐ 8

Կապի սպառման ուղղությամբ գնաճը 2020-2022 թթ.¹²

¹¹ Տե՛ս նույն տեղում:
¹² Տե՛ս նույն տեղում:



ԳԾԱՊԱՏԿԵՐ 9

Հանգստի և մշակույթի սպառման ուղղությամբ գնաճը 2020-2022 թթ.¹³


մեմատաբար կայուն կերպով:

Կապ: Այս ուղղության պարագայում, պայմանավորված ոլորտում առաջարկ ներկայացնողների սահմանափակ թվով, գրեթե չի արձանագրվում գնաճ: Մասնավորապես՝ դիտարկված 28 ամիսներից 14-ի դեպքում գնաճը բացակայում է, իսկ մնացյալ 14 դեպքերում՝ տատանվում [-0.1%;+0.4%] միջակայքում: Այս ուղղությամբ սպառման միջին գնաճը ընդամենը 0.05% է, իսկ միջին քառակուսային շեղումը՝ 0.13%: Կապի ոլորտում գնաճը և գները բավականաչափ կայուն են: Այս ուղղությամբ գնաճի ամբողջական ցուցանիշները, ինչպես նաև փոփոխման միտումն ու պարբերաշրջանայնության կորը ներկայացված են գծապատկեր 8-ում:

Հանգստի և մշակույթ: Հանգստի և մշակույթի պարագայում գնաճի ցուցա-

նիշն ունի որոշակիորեն ընդգծված պարբերաշրջանային փոփոխման միտումներ, միաժամանակ, դրա փոփոխման ընդհանուր միտումը դրական թեքվածությամբ կոր է, ավելին, կորից փաստացի ցուցանիշների շեղվածությունը քննարկվող 12 ուղղություններից ամենափոքրն է (գծապատկեր 9): Գծապատկերային դիտարկմամբ պարզ է դառնում, որ այս ուղղությամբ ՍԳԻ-ն օժտված է փոփոխման միջինից բարձր կայունությամբ:

Կրթություն: Կրթության պարագայում գները դիտարկված ցանկում ամենակայունն են, ինչը ենթադրելի իրավիճակ է, քանի որ կրթական ծառայությունների գներն ամսական կտրվածքով, սովորաբար, ենթակա չեն փոփոխության: Այս ուղղության գները դիտարկված 28 ամիսների ընթացքում փոփոխվել են միայն 3 ան-




ԳԾԱՊԱՏԿԵՐ 10

Կրթություն սպառման ուղղությամբ գնաճը 2020-2022 թթ.¹⁴

¹³ Տե՛ս նույն տեղում:
¹⁴ Տե՛ս նույն տեղում:

Սպառողական գների ինդեքս (նախորդ ամսվա նկատմամբ)



ԳԾԱՊԱՏԿԵՐ 11



Ռեստորանների և հյուրանոցների սպառման ուղղությամբ գնաճը 2020-2022 թթ.¹⁵

գամ (գծապատկեր 10), իսկ միջին գնաճը 0.12% է:

Ռեստորաններ և հյուրանոցներ: Ռեստորանային և հյուրանոցային ծառայությունների պարագայում, ինչպես և ենթադրվում էր, առկա է գնաճի պարբերաշրջանային փոփոխություն: Միաժամանակ, պարբերաշրջանային միտումից փաստացի ցուցանիշների շեղվածությունը բավական փոքր է: Արձանագրենք նաև, որ ցուցանիշը դիտարկվող ժամանակահատվածում տատանվել է [-0.7%;+1.7%] միջակայքում: Հաշվի առնելով վերջինիս փոփոխման կանխատեսելիությունը՝ շնորհիվ հստակ ձևավորված պարբերաշրջանայնության և միտումից ցածր շեղվածությունը, կարող ենք այս ուղղությամբ գնաճի կայունությունը գնահատել որպես բարձր: Ուղղությունը բնութագրող ցուցանիշները ներկայացված են գծապատկեր 11-ում:

Ամփոփելով կատարված դիտարկումները՝ կարող ենք արձանագրել, որ ուսումնասիրված 11 ուղղություններից 7-ի պարագայում գնաճը գրանցում է բավական կայուն և/կամ կանխատեսելի, 2-ի պարագայում՝ բավական անկայուն փոփոխություններ, իսկ ևս 2-ի պարագայում կայունությունը միջին մակարդակում է: Խնդիրը, բնականաբար, այդ վերջին երկու ուղղությունների մեջ է, երբ առկա չէ կայունություն: Հետաքրքրականն այն է, որ այդ ուղղությունները սննդամթերքի և ոչ ալկոհոլային խմիչքների, ինչպես նաև

հագուստի և կոշիկի սպառումն են:

Այնուամենայնիվ, որքան էլ որ կարևոր է քննարկվող ցուցանիշների շարժընթացը, էական է նաև կուտակային գնաճը, քանի որ բնակչության համար գնաճի ազդեցությունը դրսևորվում է հենց կուտակման էֆեկտի հաշվին, երբ անվանական եկամուտները փոփոխվում են ավելի դանդաղորեն, քան արձանագրվում է ամսական փոքր ծավալներով կայուն գնաճ: Այդ նպատակով հարկ ենք համարում անդրադառնալ նաև նշյալ ուղղությունների կուտակային գնաճին՝ դիտարկվող ժամանակահատվածում (գծապատկեր 12):

Գծապատկեր 12-ի դիտարկմամբ պարզ է դառնում, որ, չնայած ամսական գնաճի կայուն և ցածր մակարդակին, կուտակային առումով, սպառման գրեթե բոլոր ուղղություններում առկա են խնդիրներ, քանի որ դիտարկվող 28 ամիսների կուտակային գնաճը ուսումնասիրվող 11 ուղղություններից 7-ի դեպքում գերազանցում է 10%-ը, ինչը վկայում է բարձր մակարդակի գնաճի մասին: Հարաբերականորեն ցածր գնաճ է արձանագրվել միայն կապի և կրթության պարագայում, որտեղ գների կայունությունը ենթադրելի երևույթ է: Սակայն, հատկապես մտահոգիչ է այն հանգամանքը, որ սննդամթերքի, ալկոհոլային և ոչ ալկոհոլային խմիչքների, ինչպես նաև ծխախոտային արտադրատեսակների գնաճը գերազանցել է 25%-ը, այսինքն՝ ընդամենը 28 ամսում այդ ուղղություններ

¹⁵ Տե՛ս նույն տեղում:



ԳԾԱՊԱՏԿԵՐ 12

Ըստ սպառման ուղղությունների կուտակային գնաճը 2022 թվականի ապրիլին՝ 2020 թվականի հունվարի համեմատ¹⁶

րով սպառման գները առնվազն ¼-ի չափով բարձրացել են, ինչը, բնականաբար, բարձր կենսամակարդակի ապահովումը խոչընդոտող էական գործոն է, հատկապես, երբ միջին ամսական անվանական աշխատավարձը ՀՀ-ում 2022 թվականի ապրիլին կազմել է 217,033 ՀՀ դրամ՝ գրանցելով 13.6%-անոց աճ՝ 2020 թվականի հունվարի համեմատ¹⁷: Այսինքն՝ դիտարկվող ուղղություններից 6-ի պարագայում կուտակային գնաճը գերազան-

ցում է անվանական աշխատավարձի կուտակային աճը, ինչը, բնականաբար, նախընտրելի իրավիճակ չէ և վկայում է խնդիրների առկայության մասին: Հետևաբար՝ ՀՀ-ում առկա է գների կայունության ռիսկ, որն ուղղակիորեն ազդում է բնակչության կենսամակարդակի վրա, և մարդիկ իրենց իրական եկամուտների նվազմամբ են զգում այս ռիսկի իրագործումը: Ուստի նպատակը պետք է լինի հենց այդ ռիսկի նվազեցումը:

¹⁶ Տե՛ս նույն տեղում:

¹⁷ ՀՀ ՎԿ, https://armstat.am/file/article/sv_04_22a_142.pdf; https://armstat.am/file/article/sv_04_21a_142.pdf

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ ՎԿ հրապարակումներ, Սպառողական գների ինդեքսը Հայաստանի Հանրապետությունում 2022 թվականի հունվար-ապրիլին:
2. ՀՀ ՎԿ հրապարակումներ, Սպառողական գների ինդեքսը Հայաստանի Հանրապետությունում 2021 թվականի հունվար-դեկտեմբերին:
3. ՀՀ ՎԿ հրապարակումներ, Սպառողական գների ինդեքսը Հայաստանի Հանրապետությունում 2020 թվականի հունվար-դեկտեմբերին:
4. ՀՀ ՎԿ, Մեթոդաբանական ցուցումներ սպառողական ապրանքների գների և ծառայությունների սակագների դիտարկման և սպառողական գների ինդեքսի հաշվարկման, հաստատված է Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2020 թվականի փետրվարի 27-ի թիվ 12-Ա որոշմամբ, գլուխ 7:
5. Ղուշչյան Հ. Բ., Մակրոտնտեսական կարգավորում, Եր., 2005, էջ 450:
6. ՀՀ ԿԲ պաշտոնական կայք, <https://www.cba.am/am/SitePages/mpobjectve.aspx>, մուտքը՝ 24/05/2022, 17:09:
7. ՀՀ ՎԿ պաշտոնական կայք, https://armstat.am/file/article/sv_04_22a_142.pdf; https://armstat.am/file/article/sv_04_21a_142.pdf, մուտքը՝ 20/06/2022, 19:05:

ФИНАНСОВАЯ СИСТЕМА

Գագիկ ԲԱԴԱԴՅԱՆ
Аспирант кафедры управления, АГЭУ

ИНФЛЯЦИЯ В АРМЕНИИ: КАК МЕНЯЮТСЯ ЦЕНЫ В ЗАВИСИМОСТИ ОТ НАПРАВЛЕНИЙ ПОТРЕБЛЕНИЯ?

Инфляция является важным индикатором макроэкономической ситуации каждой страны. Это важная характеристика уровня жизни населения, постоянное изучение которой, выявление проблем и поиск решений просто необходимы. В этом контексте также важно понимать, какова инфляция в отдельных направлениях потребления, поскольку таким образом можно оценить, каковы значимые факторы, определяющие инфляцию, и негативные характеристики, влияющие на уровень жизни. С этой целью в статье исследуется инфляция по направлениям потребления.

Ключевые слова: *инфляция, индекс потребительских цен, направления потребления, нестабильность, макроэкономическое регулирование*

Gagik BADADYAN
PhD Student at the Chair of Management, ASUE

FINANCIAL SYSTEM

INFLATION IN ARMENIA: HOW DO PRICES CHANGE ACCORDING TO CONSUMPTION DIRECTIONS?

Inflation is an important indicator of the macroeconomic situation of each country. It is an essential characteristic of the living standards of the population, and its constant study, the identification of problems as well as the search for solutions are simply a necessity. In this context, it is also vital to understand what inflation is like in certain directions of consumption, because in this way it is possible to assess what are significant factors that determine inflation and negative characteristics that affect living standards. For this purpose, the paper addresses the issue of the inflation in consumption directions.

Keywords: *inflation, consumer price index, consumption directions, instability, macroeconomic regulation*